…ՒԵԼՈՒԱԾ «ՅՈՒՇԱՐԱՐԻ» XI

# ԸՍՏ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ՎՕԴԸԻԼ 1 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

*Հեղինակ՝ Լ. Իւլանով*

*Թարգմանիչ՝ Վ. Մանուկեան*

**№ 2**



ԹԻՖԼԻՍ
Տպ. Մ. Տ. Ռոտինեանցի
1908

891.99-
Կ-85
12 9 APR 2013
25 SEP 2008
18 NOV

Настоящая пьеса подъ заглавіемъ „По публикаціи“ разрешена г. Главноначальствующимъ для представлении на сценахъ края. Октября 3 дня 1903 г. г. Тифлисъ.

Председатель комитета **Гаккель**

Секретарь **Меликъ-Нубаровъ**

---

## ԱՆՁԻՆՔ

ՄԱԿԱՐ ԶԱԽԱՐԻՉ ԶԱՇԵՑԿԻՆ

ԱՆՆԱ ՎԱՍԻԼԵՒՆԱ, *նրա կինը։*

ԼԻԴՕՉԿԱ, *նրանց աղջիկը։*

ԱԼԵՔՍԷՅ ԴՄԻՏՐԻԵՒԻՉ ԿԱՅԼՅՈՎ, *Զաշեցկինի հին բարեկամը։*

ՍԵՐԳԷՅ ՆԻԿՈԼԱԵՒԻՉ ԴԱՅԼՍԿԻ. *Կայլյովի եղբօր որդին։*

ՄԱՎՐԱ, *Զաշեցկինի խոհարարուհին*

ՍԵՐԳԷՅ, *պաշտօն փնտռող ծառայ։*

*Գործողութիւնը կատարւում է Զաշեցկինի տանը։*

4758
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

12 9 APR 2013
8005 932 63



# ԸՍՏ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Տեսարանը ներկայացնում է կահաւորուած սենեակ աջ, ձախ և միջին դռներով

## 1). ԼԻԴՈՉԿԱ ԵՒ ԶԱՇԵՑԿԻՆ.

ԶԱՇ.—Դուրս է գալիս իր սենեակից լրագիր կարդալով: «Մի պատուաւոր տան համար հարկաւոր է վայելուչ հագուստով և չխմող մի սպասաւոր, որը հիմնաւոր կերպով կօշիկ սրբել իմանայ: Հասցէն Իզմայիլեան փողոց...»

ԼԻԴ.—Զբաղուած [illegible] Բարև ձեզ, հայրիկ...

ԶԱՇԵՑ.—Բարև, Լիդենչիկ, Ցոյց է տալիս լրագիրը. Նայիր խնդրեմ, պարզ է գրուած:

ԼԻԴ.—Կամենում է լրագիրը վերցնել. Թոյլ տուէք, հայրիկ:

ԶԱՇ.—Ո՛չ, ո՛չ, դու հեռուից նայիր...

ԼԻԴ.—Բայց հայրիկ այստեղից ես ոչինչ չեմ տեսնում...

ԶԱՇ.—Չես տեսնում, դէհ, ես մօտ կը գամ... Մօտենում է. Իսկ այսպէս, դարձեալ չես տեսնում:

ԼԻԴ.—Բայց ինչու էք կամենում հայրիկ, որ ես հեռուից նայեմ: Ով որ ուզում է լրագիրը կարդալ, նա էլ իր ձեռքը կառնի լրագիրը, և ոչ թէ հեռուից կը կարդայ:

ԶԱՇ.—Ես գիտեմ որ ձեռքը կառնի բայց և այնպէս ուզում եմ իմանալ, պարզ է գրուած թէ ոչ: Դէհ կարդա:

ԼԻԴ.—Լրագիրը վերցնելով: «Մի պատուաւոր տան համար հարկաւոր է մի սպասաւոր, որը հիմնաւոր կերպով կօշիկ սրբել իմանայ»: Բայց ինչու համար էք այդ տպել տուել, հայրիկ:

ԶԱՇ.—Ինչպէս թէ ինչու համար, Լիդենչիկ... հարկաւոր է որ նա այդ իսկապէս իմանայ... Տղամարդու հագուստի գեղեցկութիւնը կօշիկներն է: Եթէ լաւ են սրբուած, կարգին մարդ է, եթէ վատ՝ բանի պէտք չէ. ես մտադիր էի մինչև անգամ կօշիկ սրբելու ուսման մի հիմնաւոր ձեռնարկ պատրաստել. նայիր իմ կօշիկներիս, ինձ թւում է որ աջ կօշիկս աւելի է փայլում քան թէ միւսը: Այդ Մաւրան բոլորովին կօշիկ սրբել չի իմանում:

ԼԻԴ.—Ո՛չ հայրիկ, նրանք երկուսն էլ միատեսակ են սրբուած... Իսկ ծառան, ես կարծում եմ որ առանց այն էլ սրբել կիմանայ:

ԶԱՇ.—Բայց և այնպէս պարզ է տպուած:

ԼԻԴ.—Շատ պարզ:

ԶԱՇ.—Գիտես, ուզում էի յայտարարութիւնը ոտանաւորով դուրս բերել բայց յետոյ թողի... իսկ դու, Լիդենչիկ, չես նկատում կարծես Ս տառը պարզ չի դուրս եկել:

ԼԻԴ.—Ո՛չ հայրիկ, բոլորովին պարզ է:

ԶԱՇ.—Ըհը... իսկ տան համարը... կարծես 9-ի պոչը տեղումը չէ, կարծես 2 լինի:

ԼԻԴ.—Ճիշտն ասած, չեմ հասկանում, թէ ձեզ ինչ հարկաւոր է ծառանի:

ԶԱՇ.—Ո՛չ Լիդենչիկ, առանց ծառայի չի կարելի: Սա հասարակ քաղաք չէ, Պոկոմը խօ չէ, մայրաքաղաք է, Պետերբուրգն է, իսկ դու չես նկատում, որ ազգանունս ուղիղ չի տպուած, հ°ը:

ԼԻԴ.—Ո՛չ հայրիկ, մինչև անգամ շատ ուղիղ է...

ԶԱՇ.—Երեկ ինքս անձամբ խօսեցի խմբագրի հետ և խնդրեցի թէ որքան կարելի է պարզ տպեն, իսկ երեկոյեան գնացել եմ տպարան, գրաշարին 45 կոպէկ փող եմ տուել որ նա աշխատի...

ԼԻԴ.—Նա առանց դրան էլ պիտի այդ անէր, չէ՞ որ յայտարարութեան համար փող են վերցրել:

ԶԱՇ.—Այնուամենայնիւ... Ուրեմն ասում ես որ պարզ է: Շատ լաւ: Իսկ ինձ թւում է որ 9-ը ոչ թէ 9-ն է, այլ 2 է:

ԼԻԴ.—Հայրիկ, այդ ձեզ թւում է միայն այդպէս:

ԶԱՇ.—Դէ, լաւ... Այսօր ամբողջ օրը պիտի սպասեմ ծառային, մինչև անգամ իմ պօէմայս էլ չպէտքէ գրեմ, թէ չէ միտքս չփաթւում է... Գիտես Լիդենչիկ, ինչ եմ դրել նրա անունը... «Զարագուշակ ժայռ». ինչպիսի խորհրդաւոր վերնագիր է, այնպէս չէ՞:

ԼԻԴ.—Մինչև անգամ շատ խորհրդաւոր է: Իսկ դուք հայրիկ, շուտ կը վերջացնէք ձեր պօէման:

ԶԱՇ.—Շուտով Լիդենչիկ. շուտով, քիչ է մնացել...

## 2). ՆՐԱՆՔ ԵՒ ԱՆՆԱ ՎԱՍԻԼԵՒՆԱ.

ԱՆՆԱ.—Ակնոցները ճակատին դուրս է գալիս խոհանոցից: Որտեղ եմ թողել իմ ակնոցները... Առանց ակնոցի բոլորովին բան չեմ տեսնում: Այս րոպէիս քիչ էր մնացել մի փունտ աղը ալիւրի տեղ ածէի կարկանդակի մէջ. ինչպէս բարկութիւնս է գալիս... Բայց ուր են ակնոցներս:

ԶԱՇ.—Ցոյց տալով լրագիրը: Աննա Վասիլևնա, նայիր, և հիացիր.

ԱՆՆԱ.—Դէ՛հ գնա կորիր, ես ակնոցներս եմ փնտրում, իսկ դու դատարկ բանի ետևից ես ընկել...

ԶԱՇ.—Բայց մի նայիր է...

ԱՆՆԱ.—Հը, ի՞նչ կայ որ:

ԶԱՇ.—Լրագիրը տալով. Կարդա.

ԱՆՆԱ.—Ի՞նչ ես կպել ու պոկ չես գալիս, ինչպէ՞ս կարող եմ ես կարդալ, քանի որ ես առանց ակնոցների քթիցս դէնը ոչինչ չեմ տեսնում, արի ու տպածը կարդա:

ԶԱՇ.—Ուրեմն լսիր. Կարդում է. «Մի պատուաւոր տան համար հարկաւոր է վայելուչ հագուստով մի սպասաւոր, որը...»

ԱՆՆԱ.—Ախ, ինչպէս ձանձրացրիր դու ինձ քո սպասաւորով, քու ինչի՞դ է պէտք: Մինչև հիմա առանց սպասաւորի չէ՞նք ապրել:

ԶԱՇ.—Շատ էլ ապրել ենք, այն ժամանակ ուրիշ բան էր, հիմա ուրիշ. դու այդ չես կարող հասկանալ: Քո կարծիքով տղամարդու հագնելիքի մէջ ո՞րն է ամենից գեղեցիկը:

ԱՆՆԱ.—Սիւրտուկը:

ԶԱՇ.—Ո՛չ, սիւրտուկը չէ, կօշիկներն են...

ԱՆՆԱ.—Կարելի է. բայց ո՞րտեղ եմ թողել ես ակնոցներս:

ԶԱՇ.—Ի հարկէ կօշիկները... և ոչ թէ կօշիկները, այլ՝ նրանց մաքրելը:

ԱՆՆԱ.—Բան ասացիր:

ԶԱՇ.—Ի հարկէ, կօշիկները լաւ են սրբուած՝ մարդ է, վատ է՝ բանի

պէտք չէ։

ԱՆՆԱ.—Իսկ քեզ համար Մակար Զախարիչ, ինչպէս էլ որ սրբեն, դու դարձեալ բանի պէտք չես, գրողը տանի քեզ... Բայց ի՞նչ եղաւ ակնոցներս... Լիդա, քո աչքերը աւելի լաւ են տեսնում, արա մի փնտրիր։

ԼԻԴ.—Իսկո՛յն. Փնտրում է։

ԶԱՇ.—Իսկ ինչպիսի՞ ոտանաւոր եմ ես հեղինակել եթէ իմանաս Աննա Վասիլևնա։

ԱՆՆԱ.—Դու ծերացել ես և յիմարութիւններ ես անում միայն։

ԶԱՇ.—Առաջ դու լսիր, յետոյ յիմարութիւն անւանիր։

ԱՆՆԱ.—Է՛հ թող, ես ակնոցներս չեմ գտնում։

ԶԱՇ.—Դու լսիր իմ ոտանաւորս, այն ժամանակ ես քեզ կասեմ որտեղ են ակնոցներդ։

ԱՆՆԱ.—Դէհ ասա, միայն շուտ արա, ես ժամանակ չունիմ, խմորը կանցնի։

ԶԱՇ.—Ուշադրութեամբ լսիր։ Նախ վերնագիրն է՝ «Զարթուշակ ժամ»։

Արշալոյսը վաղուց քնից զարթել է.
Եւ Փերսը տաճար ու սոճին լուսաւորել է։

ԱՆՆԱ.—Մարդ վերցնի այդ սոճին և նրանով քեզ մի լաւ ցոյց տայ, որ էլ յիմարութիւն չանես։

ԶԱՇ.—Ա՛հ, Աննա Վասիլևնա, դուք բոլորովին բան չէք հասկանում պօէզիայից։

ԱՆՆԱ.—Գնա՛ կորիր քո պօէզիայով, խմորս անցնում է... ակնոցներս...

ԶԱՇ.—Այ, քո ճակատին է։

ԱՆՆԱ.—Բա՛ս ինչու շուտ չասացիր։ Է՛հ սոճի բանաստեղծ։ Այն անպիտան Մաւրան էլ բան չի ասում։ Գնում է։

3). ԶԱՇԻՑԿԻՆ, ԼԻԴՈՉԿԱ և յետոյ ՄԱԻՐԱ

ԶԱՇ.—Մարդ ոչինչ չէ հասկանում։ Նա միայն խմոր կարող է հունցել։ Երբէք ոչ մի բանում չի հաւանի մարդուն։ Կարդում է շտապով. «Մի պատուաւոր տան համար հարկաւոր է վայելուչ հագուստով...»

ԼԻԴ.—Մէկուսի. Եւ այսպէս ամէն օր, ամէն օր... Օ՛հ, ի՜նչ ձանձրալի է. գոնէ Սերգէյ Նիկոլաեվիչը շուտ գար...

ՄԱԻՐԱ.—Խորհելով. Նամակ ունէք։

ԶԱՇ.—Ի՞ո... Տո՛ւր այստեղ... Ումնից է։

ՄԱԻՐԱ.—Չգիտեմ։ Կանգնում է փնտրում

ԶԱՇ.—Կա՛ց, կա՛ց։

ՄԱՐԻԱ.—Ի՞նչ կայ։

ԶԱՇ.—Արի այստեղ։

ՄԱԻՐԱ.—Մօտենալով. Հ՛ը, ի՞նչ է։

ԶԱՇ.—Մօ՛տ արի. Ցոյց տալով նամակը. Տեսնո՞ւմ ես։

ՄԱԻՐԱ.—Տեսնում եմ։

ԶԱՇ.—Ի՞նչ ես տեսնում։

ՄԱԻՐԱ.—Լրագիրը։

ԶԱՇ.—Է՛, յիմա՛ր, լրագիրը։ Յայտարարութիւնը տեսնո՞ւմ ես։

ՄԱԻՐԱ.—Ո՞րտեղ։

ԶԱՇ.—Այ, այստե՛ղ, կարդա՛. Ցոյց է տալիս

ՄԱԻՐԱ.—Համեցէք։ Ա՞յս։

ԶԱՇ.—Այդ չէ, ա՛յ, որտեղ մատս դրել եմ. ահա՛։

ՄԱԻՐԱ.—Այն որ սև է, շրջանակի մէջ։

ԶԱՇ.—Այո՛, այո, դէհ, կարդա՛։

ՄԱԻՐԱ.—Բայց ես անգրագէտ եմ։ Կնքահայրս խոստացաւ սովորեցնել, բայց կամ ես ժամանակ չեմ ունենում, կամ նա։

ԶԱՇ.—«Ժամանակ չեմ ունենում»։ Հապա ինչու էիր հարցնում թէ սև շրջանակի մէջ է։

ՄԱԻՐԱ.—Ես կարծեցի թէ գուցէ կը կարդամ։

ԶԱՇ.—Ա՛յ խրտուիլակ։

ԼԻԴ.—Բաւական է հայրիկ, մի բարկանաք։

ԶԱՇ.—Ինչպէ՞ս չը բարկանամ, Լիդենչիկ, այսպիսի յիմարի վրայ։ Կարդալ չի իմանում, կօշիկ սրբել էլ չի իմանում։

ՄԱԻՐԱ.—Ես այլ ևս պէտք չեմ։

ԶԱՇ.—Ինչի՞ս ես պէտք, կորիր...

ՄԱՐԻԱ.—Հապա ինչու ինձ զբաղեցրիք... Հիմա էլ տիկինը կսկսի բարկանալ։ Գնում է։

ԶԱՇ.—Լիդիային. Դու այսպիսի յիմար աղջիկ էլի տեսել ես...

ԼԻԴ.—Բաւական է հայրիկ, աւելի լաւ է կարդացէք նամակը...

ԶԱՇ.—Այո, այո, ես Մաւրայի հետ զբաղւեցի ու բոլորովին մոռացայ... Ումնից կարող է լինել։ Բաց է անում և կարդում. «Բարեկամ, հէնց նոր կարդացի քո յայտարարութիւնը, առաւօտեան կուղարկեմ քեզ համար մի սպասաւոր։ Ուրիշին չվերցնես. լաւ և լուրջ տղայ է։ Հէնց նոր է եկել գիւղից և պաշտօն չունի։ Այսօր ես ինքս կը մտնեմ քեզ մօտ։ Քո Ալեքսէյ Կալլցով»։

ԼԻԴ.—Այդ Ալէքսէյ Դիմիտրիևիչից է։

ԶԱՇ.—Այո, նրանից։ Սպասաւոր պիտի ուղարկի։

ԼԻԴ.—Ահա՛, այդ էլ ձեզ սպասաւոր։

ԶԱՇ.—Բայց բանը նրանումն է, որ չի գրում թէ այդ սպասաւորը կօշիկ սրբել իմանո՞ւմ է, թէ ոչ։ Այդ ինձ համար ամենագլխաւորն է։ Լիդենչիկ, նայիր տես, գուցէ ես բաց եմ թողել։

ԼԻԴ.—Նամակը տանելով. Ո՛չ, չկայ. իսկ իր եղբօրորդու մասին ոչինչ չի գրում։

ԶԱՇ.—Ի՞նչ եղբօրորդի։ Սերեօժի։

ԼԻԴ.—Այո՛։

ԶԱՇ.—Բայց մի՞թէ դու ճանաչում ես նրան։

ԼԻԴ.—Ինչպէ՞ս չէ, հայրիկ, մենք երկրորդ տարին է, որ ծանօթ ենք։ Ես նրա հետ ծանօթացել եմ ինստիտուտում, պարահանդէսի ժամանակ։ Միասին ամբողջ գիշերը պարել ենք։ Յետոյ էլ երբեմն տեսնում էինք։ Նա գալիս էր ինձ մօտ ինստիտուտ, իսկ ես բոլորին ասում էի, որ նա իմ հօրեղբօր որդին է։

ԶԱՇ.—Ա՛յ դու խաբեբայ։

ԼԻԴ.—Ոչ ոք չէր էլ կասկածում, որ ես խաբում էի։ Նա ինձ համար միշտ քաղցրեղէն էր բերում, և արկղի մէջ տոմսակ դրւած էր լինում։

ԶԱՇ.—Ա՛յ թէ ինչ բան է մտածել։ Իսկ նա ի՞նչպիսի տղայ է։

ԼԻԴ.—Լա՛ւ տղայ է, հայրիկ։

ԶԱՇ.—Բոլորովին չեմ յիշում։ Ես նրան վերջին անգամ տեսել եմ երբ 8 տարեկան էր։

ԼԻԴ.—Օ՛, հիմա դուք նրան չէք ճանաչիլ։ Նա հիմա կարգին ազամարդ է դարձել։ Հայրիկ, ես գնամ նոտաներս փոխելու... այս բոլորը ես ածել եմ...

ԶԱՇ.—Գնա՛, գնա. Լիդենչիկ, իսկ ես կսպասեմ սպասաւորին։

ԼԻԴ.—Ես շուտով կը գամ... Գնում է նոտաները տանելով։

4) ԶԱՇԵՑԿԻՆ, յետոյ ԴԱՑԼՍԿԻՑ

ԶԱՇ.—Մենակ, կարդում է նամակը. «Լաւ և լուրջ տղայ է...» Իսկ գլխաւոր

քանի մասին ոչինչ չի գրում։ Այդ լաւ և չխմող տղան արդեօք կօշ'կ սրբելն էլ լաւ գիտէ՞ թէ ոչ. աւելի լաւ է հարբեցող լինի, միայն կատարեալ կօշիկ սրբել իմանայ. Կարելի է նա յայտարարութիւնը կիսատ է կարդացել, կամ թէ չէ՝ գուցէ տպածը պարզ չի դուրս եկել։ Իսկ եթէ տառերը ընկած լինին, և միւս համարներում ոչինչ դուրս եկած չլինի։ Ա՛հ, ինչ անպիտանութիւն է, այնքան խնդրեցի երեկ ես խմբագրին։ Համեցէք։ Փող են վերցնում յայտարարութեան համար, և սատանան գիտէ թէ ինչպէս են տպում։ Զանգահարում են։ Ո՞վ է. ահա, երևի սպասաւորն է. հետաքրքիր է։ Տեսնենք։

ԴԱՑԼՍԿԻՑ.—Պատիւ ունեմ ողջունելու։

ԶԱՇ.—Բարև ձեզ. Մէկուսի. Ոչինչ, տրտաքինը վայելուչ է, միայն կօշիկները կարծես այնքան էլ լաւ չեն սրբուած։

ԴԱՑԼ.—Կարելի՞ է արդեօք տեսնել Մակար Զախարիչ Զաշեցկինին։

ԶԱՇ.—Ես եմ...

ԴԱՑԼ.—Ես գալիս եմ Ալէքսէյ Դմիտրիևիչ Կալյովի մօտից։

ԶԱՇ.—Գիտեմ, գիտեմ. նա ինձ գրել էր ձեր մասին. Բռնում է նրա քրտնած ձեռքը. Դուք միայն մի ֆրակ ունի՞ք։

ԴԱՑԼ.—Զարմացած Ի՛նչ։

ԶԱՇ.—Դուք բացի այս ֆրակը ուրիշ չոր էլ ունի՞ք։ Չէ՞ որ միայն մի շորով չի կարելի։

ԴԱՑԼ.—Ինչպէս թէ, ես շատ հագուստ ունիմ։

ԶԱՇ.—Այո, այդ լաւ է... Մէկուսի. Իբրև սպասաւորի դէմք՝ կատարեալ վայելուչ է։

ԴԱՑԼ.—Մէկուսի. Ի՞նչ է պինդ պինդ ինձ նայում։ Մինչև անգամ չի էլ առաջարկում նստել։ Նրան. Դուք ի հարկէ թոյլ կտաք ինձ նստել։

ԶԱՇ.—Ինչ ասացի՞ք։

ԴԱՑԼ.—Ես հարցնում եմ, կարելի՞ է նստել։

ԶԱՇ.—Մէկուսի Ի՛նչ տարօրինակ սպասաւոր է, մի՞թէ այստեղ, Պետերբուրգում բոլոր սպասաւորները այսպէս են։ Նրան. Նստեցէք։

ԴԱՑԼ.—Mersi.

ԶԱՇ.—Դուք խօսում էք ֆրանսերէ՞ն։

ԴԱՑԼ.—Ինչպէ՞ս չէ։

ԶԱՇ.—Մէկուսի. Կրթուած ծառայ է, և ոչ թէ մեր Պսկովի ծառաների նման. միայն ռուսերէն են խօսում և մի քիչ էլ չուխոներէն հայհոյել գիտեն։ Նրան. Դուք առաջ որտե՞ղ էիք ապրում։

ԴԱՑԼ.—Մէկուսի. Ի՞նչ հարկաւոր է սրան իմ հասցէն։ Նրան. Ես ապրում էի Ֆիլիպինսօֆ կոմսուհու տանը։

ԶԱՇ.—Կոմսուհո՞ւ։ Մէկուսի. Էհէ, ինչպէս երևում է սա ինձ պէտք չէ գալու, շատ բարձրից է խփում։

ԴԱՑԼ.—Մէկուսի. Ի՞նչ տարօրինակ մարդ է այս Զաշեցկինը։ Նրան. Դուք ծխո՞ւմ էք։

ԶԱՇ.—Այդ կարծեմ ձեր գործը չէ... Ձեզ ի՞նչ։

ԴԱՑԼ.—Ես նրա համար հարցրի, որ կարելի է թոյլ տաք ինձ ծխել։

ԶԱՇ.—Ո՛չ, ես չեմ ծխում. Մէկուսի. Գրողը տանի այս տեսակ ծառային...

ԴԱՑԼ.—Բայց ես յոյս ունիմ որ դուք թոյլ կտաք ինձ մի գլանակ ծխելու... Հանում է պորտ-մոնէտը.

ԶԱՇ.—Ը...ըմ... Համեցէք... Մէկուսի. Այնուամենայնիւ այստեղ, Պետերբուրգում ծառաները շատ երես առած են։

ԴԱՑԼ.—Մէկուսի. Հօրեղբայրս ինձ ասաց որ Զաշեցկինը շատ սիրալիր մարդ է, բայց սա Աստուած գիտէ թէ ինչ է։

ԶԱՇ.—Մէկուսի. Հրամեցէք. փառաւոր կերպով նստել ու ծխում է։ Ասենք, կարելի է սա լաւ կօշիկ սրբել է իմանում, այն ժամանակ ամեն բան ներելի է։ Նրան։ Դուք կօշիկներ լա՞ւ էք սրբում։

ԴԱՑԼ.—Ի՞նչ... կօշիկնե՞ր։

ԶԱՇ.—Այո, կօշիկներ, կ. սակօշիկներ, կրկնակօշիկներ...

ԴԱՑԼ.—Մէկուսի. Ա՛յ ծիծաղելի մարդ։ Նրան. Երբէք չէ պատահել։

ԶԱՇ.—Այդ դէպքում դուք ինչպէ՞ս եկաք մեզ մօտ։

ԴԱՑԼ.—Բայց մի՞թէ ձեզ մօտ գալու համար անպատճառ պէտք է լաւ կօշիկ սրբել իմանալ։ Ես այդ չըգիտէի։

ԶԱՇ.—Այո, հարկաւոր է, անհրաժեշտ է։

ԴԱՑԼ.—Բայց ես սենեկապան խօ չեմ...

ԶԱՇ.—Սենեկապան չե՞ս։ Մէկուսի Հա՛, սա երևի դրսի ծառայութեան համար է։

ԴԱՑԼ.—Ինձ Ալեքսէյ Դմիտրիևիչն է ուղարկել։

ԶԱՇ.—Ես այդ շատ լաւ գիտեմ, և զարմանում եմ, թէ ինչի համար է նա ձեզ ուղարկել։ Դուք ինձ բոլորովին պէտք չէք։

ԴԱՑԼ.—Սպասեցէք, ես եկայ ծանօթանալու...

ԶԱՇ.—Իզուր։ Յայտարարութեան մէջ բոլորը պարզ ասած է։

ԴԱՑԼ.—Սա ինչե՞ր է ասում։

ԶԱՇ.—Եթէ դուք դրսի սպասաւորութեան համար էք եկել, ուրեմն ինձ պէտք չէք։



ԴԱՑԼ.—Ինչպէ՞ս թէ դրսի սպասաւորութեան համար։ Մէկուսի. Սա խօ մի խելագար է։

ԶԱՇ.—Դուք կամենում էք ծանօթանալ իմ պայմաններիս հետ, համեցէք... Ամսական 10 րուբլի, իմ հացով։ Հաւաքել սենեակները և անել ամեն բան, ինչպէս հարկն է, բայց անպատճառ կօշիկ սրբել։ Ես յայտարարել եմ, դուք երևի բոլորը չէք կարդացել։

ԴԱՑԼ.—Ներեցէք ի սէր Աստուծոյ, ես ոչինչ չեմ հասկանում

ԶԱՇ.—Հասկանալու ոչինչ չկայ։ Տղամարդու հագուստի բոլոր գեղեցկութիւնը կօշիկներն են։ Լաւ սրբուած՝ կարգին մարդ է, եթէ ոչ,—ոչ։ Նայեցէք ձեր կօշիկներին, նրանք շատ վատ են սրբուած։

ԴԱՑԼ.—Ի սէր Աստուծոյ, ներեցէք... Մէկուսի. Ես երևի սխալուել եմ. սա կօշկակար է։ Նրան. Բայց թոյլ տըւէք...

ԶԱՇ.—Ոչինչ չեմ կարող թոյլ տալ, դուք առանց այն էլ ինքներդ ձեզ շատ էք թոյլ տալիս։ Դուք առանց այն էլ շատ անքաղաքավարի էք. եկել էք նստել, ծխում էք, կարծես ձեր տանը լինէք։ Դուք ինձ պէտք չէք, կորէ՛ք, գնացէ՛ք. հասկացա՞ք։

ԴԱՑԼ.—Այո, ես ինքս տեսնում եմ, որ սա իմ տեղը չէ. . Յարգանքս... Մէկուսի. Սա խելագարի մէկն է։ Գնամ շնորհակալութիւնս յայտնեմ հօրեղբօրս. լաւ ընկեր ունի, խօսք չունի։։ Գնում է.

5) ԶԱՇԵՑԿԻՆ մենակ. յետոյ ԼԻԴՈՉԿԱ

ԶԱՇ.—Սատանան գիտէ թէ սա ինչ բան է. էս էլ քեզ մայրաքաղաքի սպասաւորները։ Կարծես ազնիւ լինեն։ Ֆրանսերէն են խօսում, բայց կօ-

չիկ սրբել չեն իմանում։ Ծառայության ամենագլխավոր բանը չեն իմանում։ «Ես, ասում է, երբեք չեմ սրբել կոշիկներ»։ Անքաղաքավարի։ Շնորհակալություն Ալեքսեյ Դմիտրիևիչին իր ուղարկած չիմող, խելքը գլխին սպասավորի համար։ Ինձ հարկավոր է սենեակի համար, իսկ նա ուղարկել է դրսի սպասավորության համար։ Ինչքա՛ն երես են տվել այստեղ ծառաներին, Աստված ավատէ։ Կոմսուհու մօ՛տ է ապրել։ Ո՛չ, ինձ հարկավոր է հասարակ սպասավոր, իմ ի՞նչ բանն է կոմսուհու մոտ եղածին վերցնել։ Եկել է գործի հետ ծանոթանալու։ Ցայտարարություն կայ և կարծեմ բավական պարզ է. «Հիմնավոր կերպով իմանալ կոշիկ սրբելը», սրանից էլ պա՛րզ. անգրագէտն էլ կարող է կարդալ։ Ցուցադրում է նամակը։

ԼԻԴ.—Գլխարկով և վերարկուով։ Ահա և ես հայրիկ. ի՞նչ է պատահել ձեզ։

ՉԱՇ.—Առաջին անգամից անաջողություն։

ԼԻԴ.—Բայց ի՞նչ է պատահել։

ՉԱՇ.—Սպասեցի, սպասեցի ծառային...

ԼԻԴ.—Եւ ի՞նչ։

ՉԱՇ.—Ծառան էլ եկա՛վ...

ԼԻԴ.—Նա, որին Ալեքսեյ Դմիտրիևիչը խոստացել էր ուղարկել։

ՉԱՇ.—Այո՛, և մի անպիտանի մէկը։

ԼԻԴ.--Բայց ինչո՞ւ հայրիկ։

ՉԱՇ.—Դրսի ծառայության համար է եղել և կոշիկ սրբել բոլորովին չգիտէ։

ԼԻԴ.—Ինչպէ՞ս, կոշիկ սրբել չգիտէ՞. ծառա՛ն։

ՉԱՇ.—Այո՛... Եւ բացի այդ, այնպիսի անքաղաքավարի, որ նմանը չի լինի։ Նստեց ոտը ոտի վրայ դրած, ծըխախոտ ծխեց... Լի՛րբ...

ԼԻԴ.—Ի՞նչ էք ասում։

ՉԱՇ.—Ախ, ինչպէ՛ս երես առած են այստեղի ծառայողները. հիմա ես ի՞նչ անեմ։

ԼԻԴ.—Իսկ ես այս րոպէիս պատահեցի Ալեքսեյ Դմիտրիևիչին, բարևեց ձեզ և խնդրեց ասել որ այսօր գալու է ձեզ մոտ իր եղբոր որդի Սերգէյ Նիկոլաևիչը։ Նա գիւղումն է եղել, իրանց տանը, և հէնց երեկ է վերադարձել։

ՉԱՇ.—Շնորհակալ եմ Ալեքսէյ Դմիտրիևիչից, սատանան կը հասկանայ թէ ծառայի տեղ ումն է ուղարկել ինձ մոտ։

ԼԻԴ.—Ուրեմն դուք սպասէք Սերգէյ Նիկոլաևիչին, իսկ ես գնամ հանւեմ։ Վայր է դնում նոտաները։ Ինչպիսի՜ նոտաներ եմ վերցրել հայրիկ, հիանալի են։ Գնում է.

6 ). ՉԱՇԵՑԿԻՆ, հետո ՍԵՐԳԵՅ

ՉԱՇ.—Աստուած վկայ կատաղութիւնս գալիս է. Հիմա սպասիր թէ երբ է գալու միւս ծառան... Բայց ոչինչ... Այժմ պէտք է սպասել Սերեօժին։ Հիմա նրան երևի չեմ էլ ճանաչի. առաջ մի ժիր երեխայ էր։ Բայց էլի՞ զանգահարում են։ Նա է, Սերեօժան։

ՍԵՐԳ.—Ներս մտնելով. Կարծեմ այստեղ պիտի մտնեմ։

ՉԱՇ.—Այստե՛ղ, այստե՛ղ, հրամեցէ՛ք։

ՍԵՐԳ.—Մեր յարգանքները։ Ես պարոն Չաշեցկինի մոտ եմ եկել։

ՉԱՇ. Մի կողմ, նայելով Սերգէյի վրայ. Ոչինչ, մեծացել է. Բարձր. Բարև Սերեօժա... Մեկնում է ձեռքը։

ՍԵՐԳ.—Մեկուսի. Անունս էլ գիտէ։ Երևի Ալեքսեյ Դմիտրիևիչն է գրել իմ մասին։

ՉԱՇ.—Չէ՞ք մոռացել ինձ։

ՍԵՐԳ.—Ձեռքը սեղմելով. Բոլորովին ոչ... Հասցէն լաւ յիշում էի... Ինձ պարոն Կալլցովն է ուղարկել։

ՉԱՇ.—Ինչպէ՞ս չէ։ Գիտեմ, գիտեմ... Նա այս րոպէիս պատահել էր իմ աղջկան, և նախազգուշացրել էր ձեր այցելության մասին։ Ես ձեզ սպասում էի։ Նստէք խնդրեմ։

ՍԵՐԳ.—Մի նեղանաք խնդրեմ։ Ես կարող եմ կանգնել։

ՉԱՇ.—Ո՛չ, նստեցէ՛ք առանց քաշվելու, խնդրեմ։

ՍԵՐԳ.—Եթէ թոյլ կտաք... Նստում է, մեկուսի. Ա՛յ ծիծաղելի աղա։

ՉԱՇ.—Դուք նո՞ր էք վերադարձել Պետերբուրգ։

ՍԵՐԳ.—Երկրորդ օրն է ինչ գիւղից եկել եմ։

ՉԱՇ.—Իսկ դուք գիւղում շա՞տ մնացի՞ք։

ՍԵՐԳ.—Մի ամիս պիտի մնայի, գործով էի գնացել։

ՉԱՇ.—Գիւղում լաւ է, այնպէս չէ՞։ Օդը, բնութիւնը, թռչունները... Դուք սիրո՞ւմ էք պօէզիա։

ՍԵՐԳ.—Ի՞նչ հրամայեցի՞ք։

ՉԱՇ.—Պօէզիա՛։

ՍԵՐԳ.—Մեկուսի. Այս ի՞նչ տեսակ աղա է։ Խօսքերն էլ զարմանալի են, առաջին անգամն եմ լսում։ Բարձր. Այո... Այսինքն ոչ...

ՉԱՇ.—Իսկ ես սիրում եմ պօէզիա... Գիտէք, շատ լաւ է սաւառնել...

ՍԵՐԳ.—Այդ որտեղ։

ՉԱՇ.—Այնտե՛ղ, երևակայական ամպերի մէջ։

ՍԵՐԳ.—Ամպերի մէջ։

ՉԱՇ.—Դուք երևի պրօզաիկ էք։

ՍԵՐԳ.—Մեկուսի. Որտեղի՞ց է սա այսպիսի խօսքեր գտնում, իսկ գործի մասին չի էլ խօսում։

ՉԱՇ.—Ի հարկէ, պրօզան էլ ունի իր լաւ կողմերը... Չէ՞ք հրամայիլ արդեօք մի ծխախոտ։

ՍԵՐԳ.—Շատ շնորհակալ եմ. տըւէք։

ՉԱՇ.—Տալիս է. Ահա՛, համեցէք, իսկ լուցկի ես իսկոյն կտամ։

ՍԵՐԳ.—Մեկուսի. Ա՛յ քեզ աղա՛։

ՉԱՇ.—Ահա և լուցկին, հրամեցէ՛ք։

ՍԵՐԳ.--Ծխելով. Շատ շնորհակալ եմ։

ՉԱՇ.—Իսկոյն երևում է, որ կարգին մարդ է, տես կոշիկներն էլ կրակի նման փայլփլում են. Բարձր. Իսկ ասացէք խնդրեմ, ձեր կոշիկները ո՞վ է սրբում։

ՍԵՐԳ.—Մեծ մասամբ ես ինքս։

ՉԱՇ.—Ինքներդ... մ...մ...մ... դա ձեզ պատիւ է բերում. Մեկուսի. Շատ լաւ երիտասարդ է. Բարձր. Իսկ իմ Մաւրան բոլորովին կոշիկ սրբել չի իմանում... ինչ որ խաւար են դուրս գալիս։

ՍԵՐԳ.—Երևի կոշկաներկի մէջ ջուր շատ է ածում։

ՉԱՇ.—Երևի։

ՍԵՐԳ.—Կոշկաներկի մէջ շաքար պիտի ածել, այն ժամանակ աւելի լաւ կլինի։

ՉԱՇ.—Երևակայեցէ՛ք, ես էլ եմ նրան ասում, իսկ նա ինչպէս երևում է շաքարը թէյի հետ է ուտում. ես օրինակ 2 կտոր շաքար եմ տալիս նրան, իսկ նա կոշկաներկը ջրով է խառնում։

ՍԵՐԳ.—Այդ պատահում է։ Իմ հօրեղբայրը այդ կողմից սարսափելի է։

ՉԱՇ.—Իսկ ես գիտէ՛ք, Սերեօժա, շատ եմ յարգում ձեր հօրեղբօրը, թէև մի քիչ բարկացած եմ նրա վրայ։ Շատ սիրալիր մարդ է։

ՍԵՐԳ.—Ո՞վ, իմ հօրեղբա՞յրը, լաւ բան քիչ ունի։

ՁԱՇ.—Ի՞նչ կայ որ։

ՍԵՐԳ.—Մի խօսքով փուչի մէկն է։ Հէնց որ մի բան նրան դիւր չեկաւ, իսկոյն քաշ կտայ դատարան.

ՁԱՇ.—Ի՞նչ էք ասում։

ՍԵՐԳ.—Աստուած վկայ։

ՁԱՇ.—Ասացէք խնդրեմ, չէ՞ որ նա առաջ այնպէս սիրալիր էր։

ՍԵՐԳ.—Սկսել է չուտ չուտ խըմել... Հէնց որ խմեց՝ պրծաւ։

ՁԱՇ.—Մի՞թէ։ Նշանակում է նրա մօտ ապրելը ձեզ համար այնքան էլ հաճելի չէ։

ՍԵՐԳ.—Այդ չեմ կարող ասել։

ՁԱՇ.—Բայց ինչո՞ւ Լեդենչիկը չի գալիս. դուք ճանաչո՞ւմ էք իմ աղջկան, Լիդիային։

ՍԵՐԳ.—Ամենեին։

ՁԱՇ.—Ինչպէ՞ս թէ չէ։ Իսկ յիշում էք դուք, դպրոցում պարահանդէսի ժամանակ։

ՍԵՐԳ.—Դպրոցում, պարահանդէսի ժամանակ։

ՁԱՇ.—Տես ինչ ծածկամիտն է. իսկ ո՞վ էր այնտեղ նրա ետևից ման գալիս։ Չէ՞ որ դուք...

ՍԵՐԳ.—Ախ այո, այդպէս է... ես նրանց թէյ և քաղցրեղէն էի մատուցանում։

ՁԱՇ.—Տեսնո՞ւմ ես... Բայց դուք Սերեօժա, կարելի է կուզէք նախաճաշել. ես իսկոյն կը պատրաստեմ բոլորը...

ՍԵՐԳ.—Ի՞նչ էք անում, ինչո՞ւ։ մի նեղանաք, մի անհանգստանաք։

ՁԱՇ.—Թողէք, ինչ անհանգստութիւն է, ես ձեզ չեմ թողնի։ Աղ ու հացից չեմ հրաժարւում։ Ներեցէք ինձ, ես իսկոյն կգամ։ Գնում է։

7). ՍԵՐԳԷՅ մենակ, յետոյ ՄԱՒՐԱ. Վերջում ՁԱՇԵՑԿԻՆ ԵՒ ԱՆՆԱ ՎԱՍԻԼԵՒՆԱ

ՍԵՐԳ.—Ա՜յ քեզ հրաշք... Առաջին անգամն եմ այսպիսի սիրալիր աղայի տեսնում։ Ու ծխախոտ, և հիւրասիրութիւն... Աստուած վկայ, կեանքումս այսպիսի աղա չեմ տեսել։ Եթէ լաւ ուշիկ էլ նշանակի։ Ճիշտ էր ասում Ալէքսէյ Դմիտրիևիչը թէ լաւ մարդ է, մեծ գիտութիւն ունի։ Միայն պէտք է ենթադրել, որ մի քիչ պակաս է... Ցոյց է տալիս գլուխը. Լաւ, ինչպէս էլ որ լինի կապրեմ, կարծես այստեղ լաւ կլինի։

ՄԱՎՐԱ.—Անօթը յետ տալիս. Բարև։

ՍԵՐԳ.—Դու սիրելիս, այստեղ խոհանոցի համար ես։

ՄԱՎՐԱ.—Այո, խոհարարուհի եմ։

ՍԵՐԳ.—Ո՞ր նահանգից։

ՄԱՎ.—Կալուգկի։

ՍԵՐԳ.—Կալուգկի։ Ուրեմն մենք մի երկրացի ենք։ Հը՛, ինչպէ՞ս է ձեր աղան, լա՞ւն է։

ՄԱՎ.—Ոչինչ։

ՍԵՐԳ.—Խելքից մի քիչ պակաս չէ՞։

ՄԱՎ.—Ի՞նչ էք ասում, աղան այնպէս է, ինչպէս հարկն է։

ՍԵՐԳ.—Իսկ ի՞նչ վարձատրութիւն ես ստանում։

ՄԱՎ.—7 րուբլի և ճաշ։

ՍԵՐԳ.—Իսկ ձեր կերակուրը լա՞ւն է։

ՄԱՎ.—Ոչինչ, լա՛ւ է։ Ու կերակուրը, և ամեն բան, ինչպէս հարկն է։

ՍԵՐԳ.—Հ՛ը... Իսկ աղան գանգատւում է քեզանից, կօշիկ սրբել չես իմանում։

ՄԱՎ.—Այդ կողմից նրան ոչ ոք չի գոհացնի։ Մի անգամ կնքահայրս սրբեց նրա կօշիկները, քրտինքի մէջ կորաւ, հայելու նման փայլեցրեց, բայց դարձեալ չհաւանեց։

ՍԵՐԳ.—Իսկ դու չաքարը ինչո՞ւ ես գողանում։

ՄԱՎ.—Ի՞նչ չաքար։

ՍԵՐԳ.—Քեզ աղան չաքար է տալիս կոչկան երկի համար, իսկ դու թէյի հետ ուտում ես։

ՄԱՎ.—Ի՞նչ էք ասում։

ՁԱՇ.—Մավրային. Հ՛ը, պատրաստե՞լ ես թէ ոչ։

ՄԱՎ.—Իսկոյն բոլորը պատրաստ կը լինի։

ՁԱՇ.—Սերգէյին, ցոյց տալով կնոջ վրայ, որը նրա հետ միասին ներս է գալիս. Ծանօթացէք, Սերեօժա, կինս։

ԱՆՆԱ.—Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս համար։

ՍԵՐԳ.—Շատ հաճելի է։

ԱՆՆԱ.—Ես այնպէս յարգում եմ ձեր հօրեղբօրը...

ՍԵՐԳ.—Զարժէ... նա հրէշ է։

ՁԱՇ.—Երևակայիր Աննա Վասիլևնա, սկսել է խմել, հարբել։

ԱՆՆԱ.—Ի՞նչ էք ասում, ափսոս. վաղո՞ւց է այդ։

ՁԱՇ.—Դէհ, դուք խօսէք, ես շուտով կգամ. Մավրային. Գնանք, պատրաստիր նախաճաշիկը։

ՄԱՎ.—Շատ բարի։ Գնում է։

8). ՍԵՐԳԷՅ ԵՒ ԱՆՆԱ ՎԱՍԻԼԵՒՆԱ

ԱՆՆԱ.—Նստեցէք խնդրեմ։ Մի՞թէ ձեր հօրեղբայրը սկսել է խմել։

ՍԵՐԳ.—Աստուած հեռու պահի, և ինչպէ՜ս, երբեմն երկու շաբաթ շարունակ։

ԱՆՆԱ.—Ի՞նչ էք ասում, ա՜յ, ա՜յ, ա՜յ։

ՍԵՐԳ.—Հաւատացէք։ Ու հէնց որ խմում է, առաջ սկսում է համբուրել և յետոյ կռուել։

ԱՆՆԱ.—Գլուխը շարժելով. Տեսնո՞ւմ էք։

ՍԵՐԳ.—Մազերից կը բռնի և կըսկսի գետնին քաշ տալ։

ԱՆՆԱ.—Ա՛խ, խեղճ մարդ... Վաղո՞ւց է։

ՍԵՐԳ.—Այո, մօտ տարի ու կէս կլինի։

ԱՆՆԱ.—Ա՛յ, ա՜յ, ա՜յ։ Իսկ մենք նոր ենք եկել գաւառից։ Պսկովից ենք եկել։ Այստեղ լաւ է։

ՍԵՐԳ.—Ի հարկէ, մայրաքաղաք է։ Այստեղ հյանալի է, ինչ որ կուզես կանես։

ԱՆՆԱ.—Էլ մի ասէք, միայն ամեն ինչ թանկ է։ Օրինակի համար թղտենի փայտը 5 րուբլի ու կէս է։

ՍԵՐԳ.—Պարզ բան է, մայրաքաղաք է, ամեն բան կրակի գին ունի։

ԱՆՆԱ.—Մի՞թէ, իսկ ես ոչինչ չեմ իմանում։ Բոլոր ժամանակ խոհանոցումն եմ։ Ա՛յ, իմ աղջիկս, Լիդիան, նա բոլորը գիտէ։ Դուք նրա հետ ծանօթ չէ՞ք։

ՍԵՐԳ.—Մի քիչ։

ԱՆՆԱ.—Նա այժմ չորերն է փոխում։ Լաւ աղջիկ ունիմ։ Այստեղի դըպրոցումն է սովորել։ Մենք ինքներս Պսկովումն էինք ապրում, իսկ նա այստեղ, Դաշնամուրի վրայ շատ լաւ նւագում է։ Իսկ դո՞ւք։

ՍԵՐԳ.—Այո, թուղթ խաղում եմ։

ԱՆՆԱ.—Ոչ, ես հարցնում եմ դաշնամուրի վրայ։

ՍԵՐԳ.—Ինչի վրայ որ կուզէք. դաշնամուրի վրայ, սեղանի վրայ, աթոռի վրայ։

ԱՆՆԱ.—Ախ, ես երբէք չեմ տեսել ինչպէս են նւագում աթոռի վրայ։

Երեկ շատ հետաքրքրական է։ Ի՞նչ կը-
ձինի տախտակի ձայնը

ՍԵՐԳ. — Առանձին հետաքրքրական բան չկայ, բոլորը նստում են սեղանի չուրջը, բաժանում են թղթերը...

ԱՆՆԱ. — Ախ, այդ թղթի մասին էք ասում. իսկ ես կարծում էի... Մէջ-մտնելով. ինչ որ մի տեսակ տարօրինակ է խօսում սա։

ՍԵՐԳ.—Այստեղ առհասարակ ամէն բան լաւ է. և Պալէ-դէ-կրիստալը, և Օրֆէումը և ինչ որ կուզէք ամէն բան կայ։

ԱՆՆԱ.—Իսկ մեր Պսկովում այդպիսի բաներ չկայ։

ՍԵՐԳ.—Մի խօսքով գեղեցիկ է։

9). ՆՈՅՆՔ, ԶԱՇԵՑԿԻՆ, ԵՒ ՄԱՎՐԱ

Բեմում է նախասենյակը

ԶԱՇ.—[illegible]. Այս էլ ես... խնդրեմ, օղի...

ՍԵՐԳ. – Մեծ ախորժակով։

ԶԱՇ.—Ինքս եմ պատրաստել... Լցնում է Ձեր և մեր ծանօթութիւնը նորոգելու կենացը։

ՍԵՐԳ.—Շատ շնորհակալ եմ։

ԱՆՆԱ.—Ամուսնուն կամաց, մի կողմ տանելով. Դու չես նկատում Մակար Զախարիչ, սա կարծես ինչ որ տարօրինակ է խօսում։

ԶԱՇ.—Նոյն ձևով. Ոչ, ոչինչ. Չէ որ նա մեծ մասը գիւղումն է ապրել. լաւ ջահիլ տղայ է, աշխատասէր։ Գիտես, նա մինչև անգամ ինքն է սրբում իր կօշիկները։

ԱՆՆԱ.—Ի՞նչ ես ասում։

ԶԱՇ.—Այո. Սերգեյին Գիտէ՞ք, ես ձեզ ճանաչում էի, երբ որ դուք դեռ այսքան էիք։ Ցոյց է տալիս։

ԱՆՆԱ.—Սեղանի տակին ման էիք գալիս։

ՍԵՐԳ.—Շատ կարելի է։

ԶԱՇ.—Այո, այո, ահա ձեզ սունկ, համեցէք... հիանալի են։ Այս Աննա Վասիլևնան ինքն է պատրաստել։ Ես հաւաքել եմ, իսկ ինքը պատրաստել է. համեցէք։

ՍԵՐԳ.—Խմում է. Ձեր կենացը։

ԶԱՇ.—Շնորհակալ եմ։ Իսկ յիշում էք, Սերեօժա, ինչպէս ես ու դուք թագկնոցի էինք խաղում։

ՍԵՐԳ.—Բոլորովին չեմ յիշում։

ԱՆՆԱ.—Որտեղից պիտի յիշէք։ Այն ժամանակ դուք բոլորովին փոքրիկ երեխայ էիք։ Մակար Զախարիչը ձեզ հետ թագկնոցի էր խաղում, իսկ ես ձեզ համար կարկանդակներ էի շինում։ Դուք շատ էիք սիրում։

ԶԱՇ.—Այո. իսկ հիմա դու կարգին տղամարդ ես դարձել... Ա՛խ, ներեցէք, ես առաջւայ սովորութեամբ դուով եմ խօսում ձեզ հետ։

ՍԵՐԳ.—Ոչինչ, ինձ ամենքը դու են ասում։

ԶԱՇ.—Ոչ, այնուամենայնիւ անյարմար է։

ԱՆՆԱ.—Դուք հիմայ փոքր չէք։

ԶԱՇ.—Կամենում էք, Սերեօժա, նորոգենք մեր հին յարաբերութիւնը։ Խմենք բրուդերշաֆտ... Չէ՞ք մերժիլ։

ՍԵՐԳ.—Համեցէք... Լաւ մարդու հետ ինչու չխմել։

ԶԱՇ.—Նու, շատ լաւ։ Լցնում է. Համեցէք։ Խմում են և համբուրւում։

ՍԵՐԳ.—Իսկ հիմա պէտք է հայհոյենք։ Մեզանում միշտ այդպէս է։

ԱՆՆԱ.—Ինչպէ՞ս թէ հայհոյել, այդ լաւ չէ...

ՍԵՐԳ.—Ինչ անես, օրէնք է։ Դէ՛հ, հայհոյեցէ՛ք ինձ։

ԶԱՇ.—Բայց ճշմարիտ...

ՍԵՐԳ.—Մի քաշւէք, ոչինչ, թոքել եմ...



ԶԱՇ.—[illegible]. Սերեօժա, դու... յիմար ես...

ՍԵՐԳ.—Իսկ դու, Մակար, ուղտ-մար, մէյ այսպէս։

ԱՆՆԱ.—Ինչու ոչինչ չէք ուտում։

ԶԱՇ.—Այո, այո, խնդրեմ... կեր առանց քաշւելու. իսկ դու ոտանաւորներ սիրո՞ւմ ես, Սերեօժա։

ՍԵՐԳ.—Ինչպէ՜ս չէ, մեծ հակումն ունիմ ոտանաւորների։ Ես տանը մինչև անգամ երգարան էլ ունիմ։

ԶԱՇ.—Ուզում էք կարդամ քեզ իմ պօէմաս։

ԱՆՆԱ.—Կարելի է նրանք չեն կամենում։

ՍԵՐԳ.—Ոչինչ, կարդա Մակար, բոլորը մէկ է։

ԶԱՇ.—Կոչւում է «Չարագուշակ ժայռ»։

ՍԵՐԳ.—Չարագուշա՛կ. լա՛ւ է։

ԶԱՇ.—Կարդում է.

Արշալոյսը վաղուց քնից զարթել է,
Եւ ֆերոսը տաճար ու սոճին լուսաւորել է։
Եւ Ադրիատիկ ծովի թեք-թեք ափերին,
Ջօրքի սուրն ու թուր յանկարծ փայլեցին։

ՍԵՐԳ.—Հաչալի է։ Շարունակիր։

ԶԱՇ.—Եւ միայն հեռւում ժայռը չարագուշակ,
Չէր զարթել քնից. նա դեռ քնած էր.
Իսկ այն ժայռի մօտ մի սֆինքս էր կանգնած,
Որ միայն գիտէր նրա գաղտնին ծածկւած։

ԱՆՆԱ.—Հերի՛ք է... Սերգեյին. Իսկ դուք չէ՞ք տեսել մեր բնակարանը։

ՍԵՐԳ.—Դեռ ոչ։

ԶԱՇ.—Աննա Վասիլևնա, ցոյց տուր... Դու Սերեօժա, այսօր մեզ մօտ ես ճաշելու, ես քեզ չեմ թողնի, իսկ երեկոյեան կգայ քո հօրեղբայրը։

ՍԵՐԳ.—Ուրեմն աւելի լաւ է ես գնամ, եթէ հօրեղբայրս գալու է։

ԱՆՆԱ.—Իսկ դուք նրա հետ միթէ խռով էք։

ՍԵՐԳ.—Այո, չյարգարւեցինք։ Շատ է կռւում..

ԱՆՆԱ.—Գնանք, ցոյց տամ ձեզ մեր բնակարանը։

ԶԱՇ.—Բոլորը ցոյց տուր դրան։

ԱՆՆԱ. Գնանք... Սարսափելի թանգ է միայն... առանց վառելիքի 45 ռուբլի, երկրորդ յարկում։

ՍԵՐԳ.—Այդ դեռ փառք է։ Այստեղ աւելի թանգերը կան։ Գնում են։

10) ԶԱՇւՑԿԻՆ մենակ, հետո ԼԻԴՈՉԿԱ

ԶԱՇ.—Ի՛նչ լաւ տղայ է դարձել Սերեօժան. հիանալի է։ Լեղենչիկը ճիշտ էր ասում թէ ես չեմ ճանաչի։ Կանչում է. Լեղենչի՛կ։

ԼԻԴ.—Իր սենյակից. Ի՞նչ է հայրիկ։

ԶԱՇ.—Դու չե՞ս կգաս։

ԼԻԴ.—Դուրս գալով. Պատրաստ եմ։ Ո՞ւմ հետ էիք դուք այստեղ խօսում։

ԶԱՇ.—Քեզ համար մի հետաքրքրական երիտասարդի հետ։

ԼԻԴ.—Ինչպէ՞ս։ Միթէ Սերգէյ Նիկոլաևիչը մեզ մօտ է։

ԶԱՇ.—Այո... ինչ լաւ երիտասարդ է դարձել։ Երևակայիր, ինքն է իր կօշիկները սրբում։

ԼԻԴ.—Ի՛նչ էք ասում հայրիկ, անկարելի է։

ԶԱՇ—Ինչպէ՞ս թէ անկարելի է, նա ինքն ինձ ասաց և գիտէ թէ ինչպէս պէտք է կօշկաներկը բաց անել, որ լաւ փայլի։

ԼԻԴ.—Որտեղ է այժմ Սերգէյ Նիկոլաեւիչը։

ՋԱՇ.—Մայրդ տարաւ բնակարանը ցոյց տալու։

ԼԻԴ.—Վերջապէս նա եկաւ։ Ինչպէս ուրախ եմ, վազեմ նրա մօտ։ (Վազում է)։

ՋԱՇ.—(Առանձին). Վազիր, վազիր, թէ չէ կը փախչի հա՛, հա՛, հա՛, ուրախացաւ։ Եթէ մի այսպիսի տղայ ուզի նրան, կարծում եմ աչքերս փակ էլ կը տամ։ Լաւ տղայ է։ Բայց այս ինչ է պատահել, ինձ մօտ ոչ մի ծառայ չի գալիս. զարմանալի է... Արդեօք բոլոր բաժանորդները ստացել են այսօրւայ համարը։ Իսկ եթէ յանկարծ արգելած լինեն լրագիրը. ա՛յ թէ լաւ բան կլինի. (Բեմի ետեւից լսւում է զանգի ձայնը...) Երեւի յայտարարութիւնը կարդացել են և եկել։ Տեսնենք, սա ինչպիսին է։

11) ՋԱՇԵՑԿԻՆ ԵՒ ԿԱՅԼՅՈՎ.

ՋԱՇ.—(Տեսնելով Կայլյովին). Ա՛, այդ դո՞ւ ես։

ԿԱՅԼՅՈՎ.—Այո՛ խնդրեմ, այդ ինչ ես անում։

ՋԱՇ.—Ո՛չ, դու ինձ ասա, թէ դու ինչ ես անում, այն ինչ ծառայ էիր ուղարկել ինձ համար։

ԿԱՅԼ.—Խօսքը ծառայի մասին չէ։

ՋԱՇ.—Ո՛չ, հէնց ծառայի մասին է։ Նա կօշիկ սրբել չգիտէ։

ԿԱՅԼ.—Ի՞նչ ես յիմար յիմար խօսում։

ՋԱՇ.—Ո՛չ, յիմար չէ, ամեն բան կօշիկների մէջն է։ Եթէ լաւ են սրբւած, կարգին մարդ է, վատ է սրբւած...

ԿԱՅԼ.—Լաւ, լաւ։ Դու ինձ այն ասա թէ ինչեր ես անում դու։

ՋԱՇ.—Այս րոպէիս, ինչպէս տեսնում ես, ոչինչ։

ԿԱՅԼ.—Դու, եղբայր Մակա՛ր, երեւի գժւել ես։

ՋԱՇ.—Ո՛չ, եթէ մեզանից մէկը գժւել է, այդ դու ես։ Ինձ հարկաւոր է սենեկապան և ոչ թէ դրսի ծառայ. Նա ինչին է պէտք, ես խօ ձրիեր չեմ պահում։

ԿԱՅԼ.—Գրողը տանի քեզ քո ծառայով։ Ես եկել եմ սրա մօտ բան խօսելու, իսկ սա ինչեր է դուրս տալիս։ Ես քեզ հարցնում եմ թէ ինչպէս ես վարւել իմ Սերեօժի հետ։

ՋԱՇ.—Սերեօժի հետ։ Ոչինչ... Շատ սիրալիր ընդունեցի, նախաճաշ արինք միասին...

ԿԱՅԼ.—Բայց ով է ձեր երկուսից խելագարը, դու թէ Սերեօժա՛ն։

ՋԱՇ.—Այդ արդէն չգիտեմ։

ԿԱՅԼ.—Նա ինձ շնորհակալութիւն է անում... ինչի համար, հարցնում եմ... Ձեր ընկեր Ջաշեցկինը, ասում է, անքաղաքավարի է... Ինչպէս թէ... «Այնպէս, ասում է, օրինաւոր մարդկանց հետ վարւիլ չէ իմանում»

ՋԱՇ.—(Շփոթւելով)։ Ի՞նչ ես ասում դու, ինչ... Ես նրա հետ շատ սիրով էի. մտաբերեցինք վաղեմի անցեալը, մինչև անգամ բրուտերշաֆտ խմեցինք։ Ա՛յ քեզանից գանգատւեց. սաստիկ կատարալ ես դարձել և սկսել ես խմել։

ԿԱՅԼ.—Ե՞ս.

ՋԱՇ.—Այո, ի հարկէ դու, քանի որ նա քո մասին էր խօսում։

ԿԱՅԼ.—Տօ, ես գինի բերանս էլ չեմ առնում։ Գրողը ձեզ տանի, ոչինչ չեմ հասկանում։ Նա ձեր տանից եկաւ ձեզանից շատ դժգոհ։

ՋԱՇ.—Ինչպէս թէ եկաւ քեզ մօտ. Նա ինձ մօտ է։ Կինս նրան բնակարանն է ցոյց տալիս։ Լեղենչիկն էլ նրանց հետ է։

ԿԱՅԼ.—Խաչ հանիր երեսիդ... Դու կարծես խօսքերից չափն էլ կորցրիր... Սերեօժան իմ տանը նստած է։

ՋԱՇ.—Նա չի կարող քեզ մօտ լինել, քանի որ նա այստեղ է։

ԿԱՅԼ.—Ֆու... Սատանան գիտէ միայն թէ սա ինչ բան է։ Համ ինձ մօտ է, համ քեզ մօ՛տ։

ՋԱՇ.—Կէս լինելու հարկ չկայ՝ քանի որ նա այստեղ է.

12) ՆՐԱՆՔ ԵՒ ԼԻԴՈՉԿԱ

ԼԻԴ.—Բարև ձեզ, Ալեքսէյ Դմիտրիեւիչ։ Հայրիկ ինչու խաբեցիք. Նա Սերգէյ Նիկոլաեւիչը չի։

ՋԱՇ.—Ինչպէ՞ս թէ Սերգէյ Նիկոլաեւիչը չէ...

ԿԱՅԼ.—Տեսնո՞ւմ ես... Սերեօժան դեռ գալու է քեզ մօտ։

ՋԱՇ.—Արա նա ո՞վ է։

ԼԻԴ.—Այդ արդէն չգիտեմ։ Աստուած գիտէ թէ ով է։ Ինչ որ յիմար յիմար դուրս է տալիս։

ՋԱՇ.—Անկարելի է։

ԿԱՅԼ.—Ես քեզ հայերէն եմ ասում, որ Սերեօժան իմ տանն է։

ՋԱՇ.—Արա սա ո՞վ է. Մի շատ կարգին երիտասարդ, և կօշիկներն էլ գեղեցիկ սրբւած։ Եւ վերջապէս Լեղենչիկ, նա քեզ դպրոցից ճանաչում է։

ԼԻԴ.—Մեր դպրոցում այդպիսիներին ներս չեն թողնում։

ՋԱՇ.—Ինչպէս չեն թողնում. նա ինքը ինձ խոստովանեց որ հետամուտ է եղել քեզ։

ԼԻԴ.—Դա... Ո՛չ հայրիկ, դուք շատ վատ կարծիք ունէք իմ մասին, միթէ կարծում էք որ ես թոյլ կտայի հետամուտ լինելու ինձ մի այդպիսի տխմարին։

ԿԱՅԼ.—Դու եղբայր, կարծես բոլորովին խելքդ կորցրել ես։ Ո՞ւմն ես դու իմ Սերեօժի տեղ ընդունել։

ՋԱՇ.—Սատանան էլ գլուխ չի հանի այս բանից։

13) ՆՐԱՆՔ ԵՒ ԱՆՆԱ. ընտանիքով ՍԵՐԳԷՅԻ հետ.

ԱՆՆԱ.—Ուրեմն ասում էք հարկաւոր է նաֆտով։ Սրսկել։

ՍԵՐԳ.—Անպատճառ։

ՋԱՇ.—(Կայլյովին). Ահա նայիր, միթէ սա քո եղբօր որդին չէ։

ԿԱՅԼ.—Հա՛, հա՛, հա՛, սա՛... Ոչ եղբայր, ես կեանքումս այդպիսի եղբօր որդի չեմ ունեցել։

ՋԱՇ.—Ի՞նչպէս թէ չեմ ունեցել, արա ո՞վ է սա։

ԿԱՅԼ.—Այս այն ծառայ Սերեօժան է՝ որին ես խոստացել էի ուղարկել։

ԱՆՆԱ.—Ծառա՛յ։

ՍԵՐԳ.—Հրամել էք։

ՋԱՇ.—Ա՛խ գրողը տանի, ես դրա հետ բրուտերշաֆտ խմեցի։

ԿԱՅԼ.—Բրուտերշա՛ֆտ. հա՛, հա՛, հա՛։

ՋԱՇ.—Այդ բաւական չէր, դեռ ինձ տխմար էլ անւանեց։

ԱՆՆԱ.—Տեղն է քեզ...

ՋԱՇ.—Ո՛չ, ես այս այսպէս չեմ թողնիլ։ (Սերգէյին). Յետ վերցրու այս րոպէին քո խօսքերը։

ՍԵՐԳ.—Ի՞նչ էք հրամայում։

ՋԱՇ.—Տխմար խօսքդ ետ վերցրու եթէ ոչ քեզ վատ կլինի։ Վերցնո՞ւմ ես թէ ոչ։

ՍԵՐԳ.—Ինչու չեմ վերցնի, համեցէ՛ք։

ՋԱՇ.—Այսպէ՛ս էլ սխալւել...

ԼԻԴ.—Ա՛յ խայտառակութիւն... դուք հայրիկ, երեւի Սերգէյ Նիկոլաեւիչին ծառայի տեղ էք դրել։

ԿԱՑԼ.—Ի հարկէ, նա չփոթել է․

ՁԱՇ.—Ինչպէս դու համարձակւե-ցիր ասելու թէ հետամուտ ես եղել իմ աղջկաս։

ՍԵՐԳ.—Ես ձեզ յայտնեցի որ ձեր աղջկան երեկոյթի ժամանակ թէյ եմ մատուցել և ոչ թէ…

ՁԱՇ.—Լռիր… Կոչնչում. և յան-կարծ ասում է որ դու սկսել ես խմել։

ՍԵՐԳ.—Բոլորովին ոչ, այդ ես իմ հօրեղբօրս մասին էի խօսում, Ակիմ Սաւիլիչին, և ոչ թէ նրանց մասին…

ՁԱՇ.—Ինչու՞ դու իսկոյն չասա-ցիր, որ դու ծառայ ես։

ՍԵՐԳ.—Դուք, պարոն, ժամանակ չտւիք ինձ մի խօսք ասելու։ Կամ հիւ-րասիրութիւն, կամ ծխախոտ, հօրեղբօ-րըս մասին հարց ու փորձ արիք…

ՁԱՇ.—Շատ հարկաւոր է ինձ քո հօրեղբայրը։

14) ՆՐԱՆՔ ԵՒ ԴԱՅԼՍԿԻՅ.

ԴԱՅԼՍԿԻՅ.—Ներեցէք ինձ, որ ես թոյլ տւի ինձ նորից մտնելու ձեզ մօտ բայց…

ԿԱՑԼ.—Այ քեզ իմ եղբօր որդին։

ՁԱՇ.—Ախ, ներեցէք ի սէր Աս-տուծոյ, ես ձեզ այնպէս վատ ընդունե-ցի… Բայց դուք ինքներդ էլ մի քիչ մեղաւոր էք։

ԿԱՑԼ.—Այս լաւ է… Բայց ինչու։

ՁԱՇ.—Եկաք ֆրակով, իսկ ես սպասում էի ծառային, դէհ ես էլ չփո-թւեցի… որովհետև գիտէք, դուք շատ նման էք…

ԴԱՅԼՍԿԻՅ.—Ծիծաղելով. Ծառայի։

ԼԻԴ.—Դուք հայրիկ, խառնել էք։

ԱՆՆԱ.—Դուք Մակար Զախարիչ, միշտ…

ՁԱՇ.—Ներեցէք ինձ, այսօր մեզ մօտ ձեր բաղդը չբերեց։

ԿԱՑԼ.—Աստուած կտայ և կբերի։ Դէհ Սերեօժա, ասա ինչ որ ուզում էիր ասել։

ԴԱՅԼՍԿԻՅ.—Ես այսօր առաւօ-տեան եկայ ձեզ մօտ, որ առաջինը՝ նո-րոգեմ մեր հին ծանօթութիւնը, և եր-կրորդ՝ որ պատիւ ունենամ խնդրելու ձեր աղջկայ ձեռքը։

ՁԱՇ.—Լեղենչիկ, լսու՞մ ես, մենք թէև Աննա Վասիլևնայի հետ նրա հայրն ու մայրն ենք, բայց նրա կամ-քին չենք կարող հակառակւել։ Ի՞նչ կասես Լեղենչիկ։

ԼԻԴ.—Ես հայրիկ, համաձայն եմ։

ՁԱՇ.—Շատ հիանալի…

ԱՆՆԱ.—Աստուած ձեզ բաղդաւո-րութիւն և համաձայնութիւն տայ։

ԼԻԴ.—Հայրիկ… մայրիկ…

ԱՆՆԱ. Ի՛նչ ուրախ եմ ես քեզ համար, Լիդոչկա, ասել չեմ կարող։

ՁԱՇ.—Իսկ այժմ Սերգէյը թող իր առաջին դեբիւտի համար շամպայն բերի։

ՍԵՐԳ.—Այս րոպէիս։ Գնում է։

ՁԱՇ.—Շամպայն առայ որ նոր տունս շնորհաւորենք, ահա և խնամա-խօսութեան պէտք եկաւ։

ԼԻԴ.—Ա՛յ հայրիկ. ձեր ասածը չեղաւ, ծառայի կօշիկները լաւ են սըր-բւած, իսկ կարգին մարդը ոչ թէ նա է, այլ…

ՁԱՇ.—Դէհ հիմա բանը դրանում չէ։ Դու լսել ես իմ պօէման։

ԱՆՆԱ.—Եկի իր սոճիի մասին, ինչպէս էլ չի ձանձրացնում քեզ, մեղայ քեզ տէր Աստուած։

ՁԱՇ.—Ես նրա անունը դրել եմ «Զարադուչակ ժայռ»։

ԿԱՑԼ.—Ցետոյ կը կարդաս, ժամա-նակ դեռ կլինի…

ՁԱՇ.—Դէհ լաւ, միևնոյն է, դրա փոխարէն սրանց հարսանիքին ինչ ներբողական եմ յօրինելու։

ԱՆՆԱ.—Գնա դու էլ քո ներբո-ղականով։

ՁԱՇ.—Սպասիր, ոգևորութիւն ե-կաւ վրաս։

Ամուրն խփեց իւր նետը
Եւ մենք նորից ուրախ ենք…
Եւ ես այս ուրախութեան մէջ…

ՍԵՐԳ.—Բերում է շամպայն։ Համեցէք, պատրաստ է։

ԲՈԼՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛։ Խփում են բաժակները և խմում։

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7 XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0317768

«ՅՈՒՇԱՐԱՐ»-ի Ա. տարեշրջանի յաւելուածներն են
(Արդէն տպագրուած)

I ԱԴԱՄ ՈՒ ԵՒԱ. կոմեդիա 2 գործ։
II ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. դրամ. 3 գործ.
III ԺԱՅՌ. պիէս 4 գործ.
IV ԲԱՂՆԸՍԻ ԲՈՂՋԱՑ. կատակ 2 գործ.
V ԴՈՆ ՊԻԷՏՐՕ ԿԱՐՈՒԶՕ. դրամ. 1 գործ.
VI ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿ. աշակերտական պիէս 3 գործ.

---

X ՆԱԽ ՄԵՌԱՆ ՅԵՏՈՅ ԱՄՈՒՍՆԱՑԱՆ. կատակ. 2 գործ.
XI ԸՍՏ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ. Փարս 2 գործ.

---


ԲԱՑՒԱԾ Է 1908 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՅՈՒՇԱՐԱՐ"

*Թատերական—գրական—գեղարուեստական*

Պատկերազարդ երկշաբաթաթերթի

Այս տարի տալու է 20 պատկերազարդ համար, 10 պիէս—յաւելուած, և իբր ընծայ Ադամեանի գիպսի պարելէֆը (որը ստանալ ցանկացողները պոստի ծախս պէտք է ուղարկեն 50 կ.)։

Թերթին աշխատակցում են մեր գրական-գեղարուեստական աշխարհի բոլոր յայտնի ուժերը։

Տարեկան բաժնեգինն է 5 ր. արտասահման 6 ր.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ушараръ" կամ Redaction „Houcharar" Tiflis.

Գրասենեակը գտնւում է Սօլօլակի փողոց, տ. Օրբէլի, № 14.

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

11.363

891.71
Л-85